

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24- ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Աշոտ Հովհաննիսյանս, 2021 թվականի փետրվարի 24-ից աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

> Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվական հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2021-2023 թվականների գործողությունների ծրագրի 16-րդ կետով նոտարական համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով Արդարադատության նախարարությանը տրված հանձնարարականի համատեքստում՝

> ներկայացրել եմ առաջարկություններ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

> իրականացրել եմ պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն, որի արդյունքում կազմել եմ եզրակացություններ իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝ փորձաքննել եմ «Նոտարիատի մասին» օրենքում և այդ օրենքի հետ կապված այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերը և այլ նախագծեր, ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից

օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկված նախագծեր, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ընդհանուր առմամբ, թվով՝ 368 գրություն:

Բացի վերոգրյալը իրականացրել եմ նաև այլ աշխատանքներ, մասնավորապես՝

> Պատասխանել եմ հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին:

> Պատասխանել եմ քաղաքացիների կողմից ուղարկված գրություններին:

Հարգանքով՝



Աշոտ Հովհաննիսյան

24.02.2022թ.